



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԱՐԿ

«ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ
ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ»





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ
ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Ձեռնարկ

Սույն ձեռնարկի հրապարակումը նախաձեռնել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժինը:

Ձեռնարկի հրապարակման նպատակն է հնարավորինս մատչելի և ամբողջական տեղեկատվություն ներկայացնել մամուլի հաղորդագրությունների մասին, դրանց էության, կազմման, ներկայացման ձևաչափի, տեսակների, բովանդակության և կազմման հետ կապված այլ առանձնահատկությունների մասին:

Նախատեսված է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի անձնակազմի համար:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3

☎ (+ 374 10) 52-33-56

Ֆաքս՝ (+ 374 10) 52-19-21

Էլեկտրոնային փոստ info@armstat.am

ՀՀ ԱՎԾ կայքէջեր՝ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>),

<http://www.armstatbank.am> , <http://www.armdevinfo.am>

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Ի՞նչ է մամուլի հաղորդագրությունը	5
Մամուլի հաղորդագրություն = լուր	5
Մամուլի հաղորդագրության ձևաչափը	6
Ինչպե՞ս տարածել մամուլի հաղորդագրությունները	7
ՀՀ ԱՎԾ տեղեկատվահրատարակչական գործունեությունը	8
ՀՀ ԱՎԾ մամուլի հաղորդագրությունների նմուշներ	10



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության առաքելությունն է՝ հանրության համար պաշտոնական վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը:

Տվյալների որակը, սպառողների վստահությունը և պրոֆեսիոնալ անկախությունը կան և կմնան ՀՀ ԱՎԾ նախապատվությունները:

Վիճակագրությունն անհրաժեշտ է տեղեկատվական հասարակության բոլոր տարրերին՝ պետական և մասնավոր հատվածին, հասարակական և միջազգային կազմակերպություններին, տնտեսավարող սուբյեկտներին, գիտակրթական շրջաններին, զանգվածային լրատվամիջոցներին, և ընդհանրապես, հասարակության լայն շրջաններին:

Վիճակագրական տվյալների տարածումը ներառում է բազմաբնույթ խնդիրների կատարում՝ վիճակագրական հրապարակումների տարածում, ինչպես նաև դրանց ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում տեղադրում, էլեկտրոնային կրիչներով կամ էլեկտրոնային փոստով տրամադրում:

ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվությունը հասանելի է նաև բաց գրադարանի միջոցով (0010, ք. Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3, VII հարկ, 731 սենյակ), որտեղ առկա են ՀՀ ԱՎԾ բոլոր հրապարակումները:




ԻՆՉ Է ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեսականորեն, անկախ այն հանգամանքից, թե կազմակերպությունն ինչ տարածման քաղաքականություն է բանեցնում, և ունի՞ արդյոք հասարակայնության հետ կապերի հաստիքային աշխատող, թե ոչ, ամեն դեպքում առաջին և հիմնական գործիքը, որի հետ առնչվում է կազմակերպությունը, մամուլի հաղորդագրությունն է (պետք է նախապատվությունը տալ «մամուլի հաղորդագրություն» անվանը՝ խուսափելով հնաբանությունից և «մամուլի հաղորդագրություն» ընդունված եզրույթից):


Մասնագետները մամուլի հաղորդագրություն գրելու մի քանի մոդել են առաջարկում: Հետաքրքրական է, այսպես կոչված, **SOLAADS** մոդելը՝ **S – subject**՝ առարկան, **O – organization**՝ կազմակերպությունը, **L – location**՝ կազմակերպության կամ միջոցառման գտնվելու վայրը, **A – advantages**՝ առավելությունները, մեծ մասամբ նորությունները, **A – applications**՝ ինչպես օգտվել առաջարկից, **D – details**՝ մանրամասները, **S – source**՝ աղբյուրը, որը հիմնականում տալիս է մամուլի հաղորդագրության բովանդակության մասին պատկերացումը: Մակայն ավելի տարածված և մատչելի է համարվում մամուլի հաղորդագրության կազմումը լրագրողական լուրի ժանրի նմանությամբ: Այն պետք է համապատասխանի «շրջված բուրգի» ֆորմատին և պատասխանի այսպես կոչված 5W-ներին՝ **Ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչո՞ւ** (**who, what, when, where, why**), երբեմն այս ցանկին ավելանում է նաև «**ինչպես**» հարցը: Այսինքն՝ միանշանակ կարելի է ասել, որ հասարակայնության հետ կապերի ոլորտում մամուլի հաղորդագրությունն իրականացնում է այն գործառույթը, ինչ լուրի ժանրը լրագրողական բնագավառում:

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ = ԼՈՒՐ

Որոշ մասնագետներ պնդում են, թե գերադասելի է, որ այս բոլոր հարցերի պատասխանը լինի առաջին նախադասությունում: Մակայն դա հաճախ անհնար է, նույնիսկ ձանձրալի է դարձնում հաղորդագրությունն ընթերցելը մինչև վերջ: Ինչպես լուրի դեպքում, մամուլի հաղորդագրության պարագայում նույնպես, կարևորագույն տարրը նորությունն է. չկա նորություն, չկա մամուլի հաղորդագրություն: Յուրաքանչյուր մամուլի հաղորդագրություն ինչ-որ կերպ առնչվում է մամուլի հաղորդագրություն կազմող կազմակերպության գործունեությանը և պետք է հետաքրքրություն ներկայացնի լրատվամիջոցների համար: Այլապես այն իր գործառույթը՝ տեղ հասցնել տվյալ կազմակերպության ասելիքը, չի իրականացնի:



Ձևը



Բովանդակությունը

Բուրգի վերին մասը «Ձևում» ամենափոքր հատվածն է՝ վերնագիրը, խորագիրը կամ գլխագիրը, ինչն էլ համապատասխանում է «Բովանդակության» կարևորագույն մասին:

Առաջին պարբերությունը սովորաբար լինում է «լուրային» հարցերի պատասխանը:

Կարևորագույն տեղեկատվությունը մատուցելուց հետո կարելի է շարադրել որոշ մանրամասներ, որոնք կարող են հետաքրքրություն առաջացնել լրատվամիջոցի ներկայացուցչի մոտ:

Ամենավերջում տեղադրվում է կոնկրետ դեպքի հետ նվազագույն առնչություն ունեցող տեղեկատվությունը: Որպես կանոն՝ դա կազմակերպության կամ անհատի մասին ընդհանուր տեղեկատվությունն է:

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

Կառուցվածքային առումով, մամուլի հաղորդագրության լավագույն տարբերակը մեկ էջը չգերազանցող փաստաթուղթն է: Դա նախ հնարավորություն է տալիս հնարավորինս սեղմ ներկայացնել ասելիքը, ինչը լրագրողների տեսանկյունից ժամանակի խնայողություն է (չէ՞ որ լրագրողներն են մամուլի հաղորդագրության հիմնական թիրախային լսարանը), և պահպանել այսպես կոչված «կորպորատիվ ոճի» տարրերը: Լինելով կազմակերպության «ներկայացուցիչը» արտաքին լսարանի մոտ՝ մամուլի հաղորդագրությունն պետք է պարունակի կորպորատիվ ոճի բոլոր մանրամասները՝ գույնը, լոգոտիպը, կարգախոսը, դիզայնի մանրամասները և այլն, որոնց միջոցով կազմակերպությունն ավելի ճանաչելի է դառնում:

Յուրաքանչյուր միտք պետք է ներկայացվի մեկ պարբերությամբ, յուրաքանչյուր պարբերությունը 2-3 նախադասությամբ: Այստեղ լիրիկական գեղումներն անհրաժեշտ չեն, և տեղեկատվությունը ներկայացվում է փաստերով ու առանց

մեկնաբանությունների: Կարելի է մեջբերումներ անել, ներկայացնել կազմակերպության տեսանկյունը:

Ցանկացած նորամուծություն, որը կարող է հետաքրքրել լրագրողներին/ թիրախային լսարանին, ողջունելի է:

Ստեղծագործական տարր յուրաքանչյուր առիթով. այս արտահայտությունը կարելի է կիրառել մամուլի հաղորդագրության պատրաստման համար:

Մամուլի հաղորդագրությունն ավարտվում է կազմակերպության կամ միջոցառման մասին հակիրճ պատմող տեղեկատվական հատվածով, որի հիմնական նպատակը նախնական կամ «ֆոնային» տեղեկատվության տրամադրումն է:

Մեկ այլ տեղեկատվական հատված նույնպես անհրաժեշտ է. մամուլի հաղորդագրությունը չպետք է «անհասցե» լինի: Դրա վերջում անպայման պետք է նշել հաղորդագրությունը պատրաստած ստորաբաժանման անվանումը, կոնտակտային անձի տվյալները (հեռախոսահամար, ֆաքս, էլեկտրոնային փոստ, հասցե և այլն)՝ հետագա հաղորդակցության և հետադարձ կապն ապահովելու համար:

ԻՆՉՊԵՊՍ ՏԱՐԱԾԵԼ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովորաբար կազմակերպություններում կիրառվում է էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով տարածումը: Հազվադեպ են ուղարկվում փոստով:

1. Ծավալը չպետք է գերազանցի մեկ-երկու էջը:

2. Լուսանկարները, որոնք ներկայացվում են մամուլի հաղորդագրությունում, նախօրոք պետք է փոքրացված ծավալով լինեն, որպեսզի էլեկտրոնային տարբերակն ուղարկելիս խնդիրներ չառաջանան:

3. Հանգուցային բառերը՝ կազմակերպության անվանումը, ղեկավարի խոսքը, արտադրատեսակի անվանումը, անհրաժեշտ է ներկայացնել «յուղոտ» տառերով:

4. Հաղորդագրությունը պետք է սկսվի ՀՀ գերբով, կազմակերպության լոգոտիպով, հաջորդ տողում պետք է գրված լինի. ք. Երևան և ամիս/ամսաթիվը, դրա հաջորդ տողում՝ «Մամուլի հաղորդագրություն» արտահայտությունը:

Փաստաթուղթը պետք է ավարտվի կոնտակտային անձնավորության տվյալներով՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ, անուն/ ազգանուն, պաշտոն և այլն:

5. Մարդիկ, թվերը, ամսաթվերը և հասարակությանը մշտապես հետաքրքրող այլ թեմաները, կարող են մեծ հետաքրքրություն առաջացնել մամուլի հաղորդագրության նկատմամբ:

6. Հիշեք ձեր «հակառակորդների» մասին. ցանկացած սխալ՝ ուղղագրական, կետադրական, թե այլ, վնասում է Ձեզ (հիշեք, որ Ձեր ընթերցողը մշտապես դժգոհ և քննադատ լրագրողներն են), ծանր ֆայլերը մշտապես խնդիրներ են առաջացնում տեղեկատվությունը համացանցով ուղարկելիս, ցանկացած մասնագիտական տերմին կարող է լուրջ խնդիրներ առաջացնել լրագրողների մոտ: Նման իրավիճակ կարող է լինել նաև հապավումների կիրառության դեպքում:

ՀՀ ԱՎԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԶՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի ե) կետով և 14-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված դրույթներով, ինչպես նաև «Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին» կարգի (ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 15.08.2001թ. թիվ 60 որոշում), սահմանվել են վիճակագրական հրապարակումների դասակարգումների համակարգը, հրապարակման ձևերը, կազմակերպման կարգը:

Համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրերի», ՀՀ ԱՎԾ-ն պարբերաբար հրապարակում է վիճակագրական տեղեկատվություն՝ ժողովածուների (տարեգրքերի), տեղեկագրերի, տեղեկատվական ամսական զեկույցների, վիճակագրական հետազոտությունների զեկույցների, մամուլի հաղորդագրությունների, ինչպես նաև թեմատիկ հրատարակությունների տեսքով:

ՀՀ ԱՎԾ տեղեկատվության տարածման ամենամատչելի ձևերից մեկը **մամուլի հաղորդագրություններն** են: Դրանք ցուցանիշերի համառոտագրերն են և թեմատիկ հաղորդագրությունները (ամսական և եռամսյակային պարբերականությամբ)՝ հիմնված ընթացիկ-օպերատիվ տվյալների վրա:

Ստորև ներկայացվում են պարբերաբար հրապարակվող հետևյալ մամուլի հաղորդագրությունների տեսակները.

- **«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշերը»** հրապարակվում է ամսական պարբերականությամբ՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը, ոչ ուշ, քան ժամը 12.00-ին, որպես կանոն, աղյուսակային ներկայացմամբ:
- **«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը»** բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագրերը զանգվածային լրատվամիջոցներին հրապարակման համար տրամադրվում են եռամսյակային կտրվածքով՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հրատարակումից (տպագրումից) հետո՝ 2-րդ աշխատանքային օրը:
- **«Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը»**՝ տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը,
- **Թեմատիկ հաղորդագրությունների** շարքում պատրաստվում են նաև միջազգային համադրումներ, հետքարքրաշարժ վիճակագրական նյութեր, աղյուսակային նյութեր:

Ծրագրվածից դուրս, մամուլի հաղորդագրություններ պատրաստվում են նաև ՀՀ ԱՎԾ կողմից կազմակերպվող մամուլի ասուլիսների, ՀՀ ԱՎԾ վիճակագրական հրատարակությունների շնորհանդեսների, սեմինարների, աշխատանքային հանդիպումների մասնակիցների և այլ դեպքերի համար:

*Մտորն ներկայացվում են 2013թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից
հրապարակված մամուլի հաղորդագրությունների նմուշներ*

Նմուշ 1՝



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

11.03.2013թ.

2 0 1 2 թ վ ա կ ա ն ի

պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման մասին

<<Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-211-Ն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 16.12.2009թ., թիվ 64 (730)) սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումները, «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հոդվածներով սահմանված պահանջների համաձայն, արտացոլվել են «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում», ինչը հաստատվել է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) կողմից և հրապարակվել (ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր (ԳՆԱՏ), 01 փետրվարի 2012թ., թիվ 3 (416)՝):

Հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված աշխատանքները (միջոցառումները), 2012թ.-ին նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալը (հաշվի առած պարբերականությունը) կազմել է 1 910 միավոր, ինչն ամբողջությամբ կատարվել է՝

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրով նախատեսված միջոցառումները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհների միջոցների հաշվին: Բյուջետային հայտերի հիման վրա դրամարկղային ծախսը կազմել է 1 009.6 մլն. դրամ:

2012թ. ընթացքում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) կողմից հրապարակվել են 56 անուն վիճակագրական հրապարակումներ (թղթային կրիչներով՝ 13.2 հազ. տպաքանակով), որոնք նաև տեղադրված են ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում (գրադարանային ֆոնդը 01.01.2013թ. դրությամբ կազմել է 11 300 անուն վիճակագրական գրականություն) և զետեղված են 1999թ. ապրիլից գործող ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում:

2012թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ ինտերնետային հանգույց են այցելել մոտ 212 հազ. անգամ (միայն www.armstat.am կայքէջը), ինչը 15 հազ.-ով (7.6%) ավելի է 2011թ. համապատասխան ցուցանիշից: Ըստ Circle հաշվիչի գրանցումների, դիտվել է 1 012 691 էջ:

Տեղեկատվության միջազգային փոխանակման շրջանակում 2012թ.-ին հրապարակման նպատակով էլեկտրոնային փոստով 200 պատասխան է ներկայացվել համապատասխան վիճակագրական կազմակերպություններին, իսկ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին՝ 193:

2012թ.-ին ՀՀ ԱՎԾ են այցելել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ազգային վիճակագրական ծառայությունների 34 հանձնախմբեր և 74 փորձագետներ, իսկ, ընդհանուր առմամբ, միջազգային համագործակցության շրջանակում տեղի է ունեցել 148 պաշտոնական հանդիպում: ՀՀ ԱՎԾ 109 աշխատակից մասնակցել է արտասահմանյան 26 երկրում կազմակերպված վերապատրաստման և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների և այլ միջոցառումների:

ՀՀ ԱՎԾ 371 աշխատակիցներ մասնակցել են Հայաստանում կազմակերպված նմանատիպ և միջգերատեսչական բնույթի ու այլ կազմակերպությունների միջոցառումների:

2012թ.-ին ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 32 սեմինար-շնորհանդես՝ նվիրված վիճակագրության տարբեր բնագավառներին, ՀՀ ԱՎԾ այցելած միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց՝ ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 680 միավոր:

2012թ.-ին ՀՀ ԱՎԾ-ում ուսումնարտադրական պրակտիկա է կազմակերպվել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թվով 15 բարձրագույն ուսումնական հաստատությունների 278 ուսանողների համար:

2012թ.-ին ՀՀ ՎՊԽ կողմից ընդունվել է 72 որոշում, որից 32-ը՝ նորմատիվ: Նորմատիվ որոշումները ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են և հրապարակվել ՀՀ ԳՆԱՏ-ներում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2012թ.-ի ընթացքում փաստաթղթաշրջանառության թվային պատկերը հետևյալն է.

1. Մտից թղթակցություն՝ 4 944 միավոր,

2. Ելից թղթակցություն՝ 14 592 միավոր:

X X X
X X

«2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» կազմված է 2010-2012թթ. Եռամյա ծրագրի հիման վրա: Եռամյա ծրագրով սահմանված ուղղությունները խարսխված են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (15.04. 1992թ.) և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի (14.04.1994թ.) կողմից ընդունված՝ **«Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»**-ի և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների և ստանդարտների վրա: Պաշտոնական վիճակագրության միջազգային ստանդարտները և երկրների վիճակագրությունների՝ դրանց համապատասխանությունը վարում է Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), որի կողմից սահմանված առավել ամբողջական և մշտադիտարկման ենթարկվողը համարվում է «Տվյալների տարածման հատուկ ստանդարտը» (SS2U):

ՀՀ ԱՎԾ, ՀՀ ֆինանսների նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց SS2U-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), կատարելով կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին (SS2U-ին այս պահին անդամագրված են 70 երկրներ և Եվրոստատը):

SS2U-ն պարունակում է մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Pages/SDDS/Home.aspx>: Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) SS2U տվյալների կատեգորիաների մասով ՀՀ վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>: Մեթատվյալները գետեղված են նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» բաժնի «Մեթատվյալներ» ենթաբաժնում:

SS2U-ն ներառում է 21 խումբ ցուցանիշներ, որոնք ընդգրկված են իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներում: Այդ ցուցանիշների արդիականացումն իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ ամսվազն տարեկան կտրվածքով: Տվյալների արդիականացման ժամկետները ներկայացված են ՀՀ ԱՎԾ կողմից վարվող նախապես տարածման օրացույցի էջում՝ <http://docs.armstat.am/nsdp/arc/>:

2008թ. ապրիլի 29-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական նստաշրջանում Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի (բաղկացած 24 անդամ-երկրներից) անդամ: Անդամակցությունը 4 տարի ժամկետով է՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

2011թ. հունվարի 31-ից Հայաստանում մեկնարկել է «Ազակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» Եվրամիության (ԵՄ) ԹՎԻՆԻԳ Օրագիրը, որի նպատակն է աջակցել Հայաստանի վիճակագրությանը ԵՄ չափանիշներին մոտարկված մեթոդաբանությունների հիման վրա ԵՄ երկրների հետ ուղղակիորեն համադրելի վիճակագրության թողարկմանը: Օրագրի գլխավոր գործընկերն է՝ Դանիայի վիճակագրական ծառայությունը, կրտսեր գործընկերը՝ Գերմանիայի վիճակագրական ծառայությունը, մասնակիցներն են՝ Եվեդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունները: Օրագիրն ավարտվեց 2013 թ. հունվարի 30-ին:


2012թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում համարվել է «Փաստաթղթավորում» բաժինը, իսկ «Միջազգային վիճակագրական համագործակցություն» բաժնում՝ «ԹՎԻՆԻԳ» ենթաբաժինը, որոնցում համապատասխանաբար գետեղվել են «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում որակի բոլոր հոշակագրերը (ըստ՝ <<Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոշակագրի>> պահանջների) և ԹՎԻՆԻԳ ծրագրի վերաբերյալ նյութերը:

ԵՄ ԹՎԻՆԻԳ ծրագրի շրջանակում 14.09.2012թ.-ից շահագործվել է ARMSTATBANK.AM տվյալների նոր բազան (կայքէջը): ARMSTATBANK.AM-ը հնարավորություն է ընձեռում վիճակագրության բոլոր սպառողներին ներբեռնել վիճակագրական տվյալներն իրենց իսկ նախընտրելի ձևաչափերով: Տեխնոլոգիայի հիմքում ընկած է օգտվողի համար շատ հարմարավետ PX-Web ծրագիրը, որը մշակվել է Եվեդիայի վիճակագրության կողմից և օգտագործվում է ավելի քան 40 ազգային վիճակագրական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ամբողջ աշխարհում: ARMSTATBANK.AM-ը թույլ է տալիս ընտրել սպառողին հետաքրքրող աղյուսակները և ցուցանիշները շատ պարզ ընթացակարգով, տրամադրում է արագ և մատչելի հասանելիություն վիճակագրական տեղեկատվությանը, և հնարավորություն է ընձեռում ներբեռնել տվյալները MS Excel, xml կամ այլ ձևաչափերով, ինչպես նաև ստեղծել գծապատկերներ և աղյուսակներ, որոնք կառուցված են սպառողների պահանջների համապատասխան: Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում, որն օգտագործում է PX-Web 2012թ. տարբերակը:

ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ

Պարզաբանումների համար տեղեկատու՝

☎ 523 356 Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

8 փետրվարի 2013թ.

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Նորածիններին ավելի հաճախ տրվող անուններն ըստ սեռի

Աղջիկներ		Տղաներ	
Անուններ	2012թ.	Անուններ	2012թ.
Ընդամենը ծնվածներ նրանցից՝	19 618	Ընդամենը ծնվածներ նրանցից՝	22 715
1. Նարե	945	1. Դավիթ	1 283
2. Միլենա	868	2. Նարեկ	1 129
3. Մարի	773	3. Գոռ	813
4. Մանե	751	4. Հայկ	671
5. Անի	610	5. Էրիկ	619
6. Անահիտ	591	6. Ալեքս	613
7. Էլեն	577	7. Տիգրան	544
8. Մարիամ	441	8. Արման	528
9. Աննա	434	9. Մամվել	490
10. Մարիա	405	10. Ալեն	448
11. Մերի	391	11. Արթուր	447
12. Անգելինա	367	12. Արամ	413
13. Գալանե	342	13. Արմեն	403
14. Լիլիթ	296	14. Աշոտ	388
15. Եվա	295	15. Արեն	357
16. Սուսաննա	282	16. Գևորգ	344
17. Սոնա	276	17. Մարգիս	333
18. Հասմիկ	272	18. Արեգ	306
19. Վիկտորյա	246	19. Վահե	300
20. Գոհար	232	20. Արսեն	298
21. Նատալի	192	21. Գագիկ	291
22. Կարինե	189	22. Լևոն	290
23. Յանա	178	23. Արտյոմ	283
24. Սոֆի	166	24. Հովհաննես	281
25. Ռուզաննա	156	25. Կարեն	257
26. Կարինա	156	26. Միքայել	225
27. Լուսինե	154	27. Ռոբերտ	208
28. Լիանա	142	28. Վարդան	188
29. Անուշ	142	29. Մհեր	174
30. Արևիկ	137	30. Գարիկ	171
31. Սյուզաննա	135	31. Սուրեն	166
32. Մարիաննա	132	32. Հարություն	166
33. Թամարա	122	33. Գրիգոր	159
34. Դիանա	121	34. Մարկ	158
35. Մարինա	112	35. Դանիել	152
36. Սյուզի	111	36. Ալեքսանդր	146
37. Էլինա	103	37. Հակոբ	143
38. Սվետլանա	100	38. Համլետ	141
39. Նանե	99	39. Էդգար	138
40. Սեդա	99	40. Մամվել	134
41. Նարինե	99	41. Ռուբեն	134
42. Նեյի	99	42. Ռաֆայել	132
43. Սառա	98	43. Անդրանիկ	130
44. Աստղիկ	98	44. Սերգեյ	129
45. Սոնիկա	98	45. Ալբերտ	112
46. Արմինե	97	46. Ավետ	109

Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3
 Հեռախոս:(37410) 524 213, Ֆաքս:(37410) 521 921,
 E-mail: armstat@sci.am, info@armstat.am, URL: <http://www.armstat.am>



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ

Ք. ԵՐԵՎԱՆ

Նոյեմբերի 26, 2013թ. ժ. 11.00

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ»

վիճակագրական-վերլուծական զեկույցի մասին

(2012թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների)

ամբողջացված հետազոտության հիմնական արդյունքները)

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցը միտված է գնահատելու Հայաստանի սոցիալական վիճակի և կենսամակարդակի փոփոխությունները 2008-2012թթ.: Սույն զեկույցը թվով 14-րդն է ՀՀ ԱՎԾ կողմից ամենամյա պարբերականությամբ հրատարակվող համանուն զեկույցների շարքում: Նշյալ զեկույցի հիմնական նպատակն է հանրությանը տրամադրել տեղեկատվություն երկրում աղքատության մակարդակի և սոցիալական վիճակի վերաբերյալ՝ ըստ 2012թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքների: 2012թ.-ին իրականացված SSԿԱՀ –ն ֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեից:

Թեև զեկույցի հիմքում հիմնականում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված SSԿԱՀ արդյունքներն են, օգտագործված է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության նախարարությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Զեկույցի վերլուծական շարադրանքն իրագործվել է Համաշխարհային բանկի վերլուծական և տեխնիկական աջակցությամբ:

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվել է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումն ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում:

Զեկույցում ներկայացված է 2008-2012թթ.-ի Հայաստանի աղքատության պատկերը: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ աղքատության չափման և վերլուծության մեթոդաբանությունը վերանայվել է (հիմնված 2009թ.-ի տվյալների վրա) և արտացոլում է վերջին մի քանի տարիների ընթացքում տնային տնտեսությունների սպառման մեջ տեղ գտած փոփոխությունները: Աղքատության արդիականացված մեթոդաբանությունը, ի տարբերություն նախորդի, որը հիմնված էր 2004թ.-ի տվյալների վրա, հնարավորություն է տալիս ավելի բարձր աղքատության գծերով ընդգծել կենսապայմանների ընդհանուր փոփոխությունները և տնային տնտեսությունների փաստացի սպառման մեջ ոչ պարենային մասնաբաժնի աճող կարևորությունը:

2012թ.-ին աղքատության գիծը հաշվարկվել է, օգտագործելով 2009թ.-ի փաստագրված նվազագույն պարենային զանրյուղը և ոչ պարենային ապրանքների գնահատված մասնաբաժինը:

Աղքատության գծերը և դրանց փոփոխությունը 2008-2012թթ.-ին, մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար

(դրամ)

Աղքատության գծերը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	17 644	17 483	19 126	21 306	21 732
Աղքատության ստորին ընդհանուր գիծ	24 388	25 217	27 410	29 856	30 547
Աղքատության վերին ընդհանուր գիծ	29 903	30 920	33 517	36 158	37 044

Աղբյուրը. 2008-2012թթ. SSԿԱՀ

Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին ընդհանուր գծից, **շատ աղքատ** են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին ընդհանուր գծից, իսկ **ծայրահեղ աղքատ** գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

2012թ.-ին աղքատության ընդհանուր, վերին և ստորին, ինչպես նաև ծայրահեղ աղքատության գծերն արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար, գնահատվել են, համապատասխանաբար՝ 37 044 դրամ (կամ 92.2 ԱՄՆ դոլար), 30 547 դրամ (կամ 76.0 ԱՄՆ դոլար) և 21 732 դրամ (կամ 54.1 ԱՄՆ դոլար):

Զեկույցում զետեղված են նաև համաշխարհային ֆինանսատնտեսական, պարտքային, իրացվելիության և վստահության ճգնաժամերի վնասակար ազդեցությունները Հայաստանի տնտեսության վրա, սկսած 2008թ.-ի IV եռամսյակից:

2008-2012թթ.-ին Հայաստանում աղքատության մակարդակի աճը պայմանավորող առավել կարևոր գործոնը 2009թ.-ի տնտեսության խոր անկումն էր՝ 14.1%: Հայաստանի տնտեսությունը 2010թ.-ին մի փոքր աճեց նախորդ տարվա նկատմամբ, սակայն աճը կազմեց միայն 2.2%, 2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ՝ 4.7%: Բավականին զգալի էր 2012թ. ՀՆԱ-ի աճը՝ 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008թ.-ի մակարդակին: Ինչպես բացահայտում են 2012թ.-ի ՏՏԿԱՀ-ի տվյալները, ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008թ.-ի համեմատ աճել է 6.3%-ով: Աճը արձանագրվել է սպառման բոլոր քվինտիլներում:

2012թ.-ին արձանագրվեց աղքատության մակարդակի նվազում նախորդ տարվա համեմատ: 2012թ.-ին աղքատության մակարդակը կազմել է 32.4%, ինչը 7.4%-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից (35.0%): 2012թ.-ին բնակչության մոտ ամեն երրորդը՝ 32.4%, եղել է աղքատ, նրանցից 13.5%-ը՝ շատ աղքատ, իսկ 2.8%-ը՝ ծայրահեղ աղքատ: Չնայած որ, 2012թ.-ին 2011թ.-ի նկատմամբ աղքատության մակարդակը նվազել է, սակայն 2008թ.-ի համեմատ թե՛ աղքատության մակարդակը, թե՛ դրա խորությունն ու սրությունը, դեռևս գերազանցում են այն:

2012թ.-ին աղքատների թվաքանակը կազմել է մոտ 980 հազ.(մշտական բնակչության ցուցանիշի հաշվով¹), շատ աղքատների թվաքանակը՝ 408 հազ.մարդ, իսկ ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ մոտ 85 հազ.:

Աղքատության խորության 5.6% գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղքատ, և ոչ աղքատ) հավաքագրելու (մոբիլիզացնելու) աղքատության գծի 5.6%-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերանար, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե աղքատության խորությունը հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա այն ցույց է տալիս աղքատության պակասորդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունն արտացոլում է աղքատների միջև եղած անհավասարությունը, որն արտացոլում է այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ: 2012թ.-ին աղքատության սրությունը եղել է 1.6%:

Աղքատության հիմնական ցուցանիշները 2008- 2012թթ.-ին (%)

	2008թ.			2011թ.			2012թ.					
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1.9	13.0	27.6	4.6	21.3	35.2	3.2	14.3	32.5	64.6	5.9	1.7
Երևան	1.1	8.1	20.1	2.7	14.5	27.5	2.2	10.5	25.6	26.7	4.3	1.2
Այլ քաղաքներ	2.8	18.2	35.8	6.6	28.7	43.6	4.4	18.4	40.2	37.9	7.7	2.3
Գյուղական բնակավայրեր	1.2	11.9	27.5	2.2	17.5	34.5	2.1	12.0	32.1	35.4	5.1	1.4
Ընդամենը	1.6	12.6	27.6	3.7	19.9	35.0	2.8	13.5	32.4	100.0	5.6	1.6

Աղբյուրը: *ՏՏԿԱՀ, 2008-2012թթ. Նշում:* Սպառումը գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով:

¹ 2012թ. մշտական բնակչության թվաքանակը հաշվարկված է ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների, իսկ 2011թ. ՏՏԿԱՀ-ի արդյունքում ստացված աղքատների թվաքանակի ցուցանիշը (հրապարակված նախորդ զեկույցում) հաշվարկված էր ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով վարվող 2011թ. մշտական բնակչության ցուցանիշի հիման վրա: Այդ ցուցանիշները համադրելի չեն, քանզի 2011թ. միջին տարեկան ցուցանիշը (2011թ. ցուցանիշը, ինչպես և նախորդող տարիների) դեռ չի վերանայվել ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների:

2012թ.-ին 2008թ.-ի նկատմամբ ավելացել է ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1.8 անգամ (կամ 1.2 տոկոսային կետով), շատ աղքատների մակարդակը՝ 7.1%-ով (կամ 0.9 տոկոսային կետով), իսկ ընդհանուր աղքատության մակարդակը՝ 17.4%-ով (կամ 4.8 տոկոսային կետով): 2012թ.-ին աղքատության խորությունը գնահատվել է 5.6%՝ 2008թ.-ի 5.1%-ի համեմատ (աճը 9.8% կամ 0.5 տոկոսային կետով), իսկ աղքատության սրությունը գնահատվել է 1.6%՝ 2008թ.-ի 1.4%-ի համեմատ (աճը 14.3% կամ 0.2 տոկոսային կետով):

Աղքատության գծի նկատմամբ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառման պակասուրդը, արտահայտված տոկոսներով, կազմել է 17.4%:

Աղքատությունը 2012թ.-ին շատ չի տարբերվում ըստ քաղաքային (32.5%) և գյուղական բնակավայրերի (32.1%):

2008-2012թթ.-ին աղքատության մակարդակի աճը քաղաքային բնակավայրերում մի փոքր ավելի արագ էր ընթանում, քան գյուղական բնակավայրերում (4.9 տոկոսային կետ՝ 4.6 տոկոսային կետի դիմաց):

Երկրում աղքատության մակարդակն ըստ տարածաշրջանների ամենացածրն է մայրաքաղաք Երևանում (25.6%) և այն 1.6 անգամ ցածր է, քան Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում: 2012թ.-ին 2008թ.-ի համեմատ աղքատության աճը Երևանում կազմել է 5.5 տոկոսային կետ, Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում՝ 4.4 տոկոսային կետ: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (64.6%) քաղաքաբնակներ են:

Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բեռնացումն ըստ եկամուտների ցուցանիշի, ավելի խորն է սպառման ցուցանիշի համեմատ:

2012թ.-ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ կազմելով 0.269՝ 2008թ.-ի 0.242-ի համեմատ: Ըստ ամբողջական եկամուտների, անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 2012թ.-ին 0.372՝ 2008թ.-ի 0.339-ի համեմատ:

Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ բնակչության սուբյեկտիվ գնահատականները

2012թ.-ի ՏՏԿԱՀ-ի ընթացքում տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի առկա անդամներին տրվել են հարցեր կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականների վերաբերյալ: Հայաստանում մեկ չափահասին համարժեք սպառման ագրեգատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի (32.4%) համեմատ, սուբյեկտիվ գնահատականներն (իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետներ) ավելի ցածր են (17.6%):

Իրենց ծայրահեղ աղքատ են համարել 3.1%-ը՝ 2.8% մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակի համեմատ: 2012թ.-ին 2008թ.-ի համեմատ աղքատության մակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականներն ավելի բարձր են (2012թ.-ին 17.6%՝ 2008թ.-ի 17.0%-ի համեմատ):

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցը հասանելի է

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում (721 սենյակ) և ՀՀ ԱՎԾ կայքէջում՝ <http://armstat.am/am/?nid=81&id=1503>

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Պարզաբանումների համար տեղեկատու՝

☎ 523 356 Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին



**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

25.12.2013թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ)»
վիճակագրական ժողովածուն հրապարակելու մասին**

Սույն թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) հրապարակել է «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները)» վիճակագրական ժողովածուն, ինչը հասանելի է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի (<http://www.armstat.am>) և հայելային կայքէջի (<http://www.armstat.info>) «Հրապարակումներ» և «Մարդահամար 2011» խորագրերով բաժիններում:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Պարզաբանումների համար տեղեկատու՝

☎ 523 356 *Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին*
524 528 *Մարդահամարի և ժողովրդագրության բաժին*

ՁԵՌՆԱԼԿ
«ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ
ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Թողարկման պատասխանատու՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի
վիճակագրական տեղեկատվության տարածման և
հասարակայնության հետ կապերի բաժին

Տպագրված է՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի
տպագրակազմարարական և պատճենահանման
աշխատանքների բաժնում